




ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՏՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻՆ



րբ է եղել, կամ եղե՞լ է արդյոք, որ Հայոց Հայրապետը այցելության է եկել Իր սիրելի հոտին, և այդ այցելությունը չի ունեցել իր խորունկ հուզումները և դրոշմը հայ հավատացյալների սրտերում: Չի՞ եղել և չի՞ լինելու այդպիսի ժամ, առավել ևս, երբ սիրված Հայրապետն է տեսության եկել Իր սիրասուն ժողովրդին:

Այսպիսին եղան Նորին Ս. Օծույնուն Վեհափառ Հայրապետի մինչ այժմ տված հովապետական այցելությունները, և օրինալավորեն նաև՝ Արարատյան թեմին:

Դեկտեմբերի 8, Կիրակի: Մեր չքնաղ մայրաքաղաքի եռյակ եկեղեցիները, իրենց բազմաթիվ հավատացյալների և երևանցիների հետ, սրտատրուփ սպասում են Նորին Վեհափառության օրհնաբեր ու բարի գալուտյան Երևան: Հակառակ ցուրտ և անձրևոտ եղանակին, մայրաքաղաքի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, ուր ժամանելու է այսօր Վեհափառ Հայրապետը, իր շրջափակով լի է հավատացյալների բազմությամբ: Մարդկանց խուռն շղթան ձգվում է Ս. Սարգիս եկեղեցուց մինչև Հաղթանակ կամուրջի գլուխը: Արտակարգ աշխուժություն և անհամբերություն է տիրում: Բոլորի հայացքը շեշտակիորեն բևեռվում է էջմիածին տանող խճուղու վրա: Մայրաքաղաքի հոգևորականների դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները, դպրաց դասերը շարք կազմած սպասում են պատրաստ վիճակում:

Ժամը առավոտյան 11-ն է: Ահա երևում է ինքնաշարժների շարասյունը և մայթերի վրա սպասող հոծ բազմությունը ալեկոծվում է: Գալիս է Հայոց Հայրապետը՝ Արա-

րատյան թեմի Իր սիրեցյալ հոտին այցելություն տալու, գալիս է հայրապետական ողջուններով և օրհնությամբ լույս ու պատգամ, հույզ ու խաղաղություն բերելու հավատացյալ հոգիներին: Ամենայն Հայոց Հայրապետն է գալիս Երևան, հայոց մայրաքաղաքը, աստվածակառույց Ս. էջմիածնի Մայր Տաճարի, Իջման Ս. Սեդանի և Մեծ Լուսավորչի Աջի և մշտավառ կանթեղի խորին խորհրդով: Ահա թե ինչու հավատացյալ երևանցիները ծաղկյա կամարների վրա գրել էին. «Բարի գալուտտ սիրելի Վեհափառ Հայրապետին»:

Նորին Ս. Օծույնյան ինքնաշարժը արագորեն շրջապատվում է խանդավառ բազմությամբ: Ամեն ոք ցանկանում է համընդունվել Վեհափառ Հայրապետի Ս. Աջը: Հընչում են զվարթագին ծափողջուլները: Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ամպհովանու տակ և ապա շարականների երգեցողությամբ, խաչով ու բուրվառով, եկեղեցական թափորով և ժողովրդի հոծ բազմության ուղեկցությամբ առաջնորդվում է Ս. Սարգիս եկեղեցին, որն արդեն շատ վաղուց լի էր հավատացյալներով: Մայթերի վրա, պատշգամբներում հավաքվել է խուռն բազմություն, որը ջերմորեն դիմավորում է Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը օրհնում է բոլորին և առաջանում դեպի Ս. Սարգիս: Սպիտակազգեստ դեռատի աղջիկներ Վեհափառ Հայրապետի ճանապարհին փոխած գորգերի վրա ծաղիկներ են սփռում: Բոլոր հավատացյալների դեմքերին կարդացվում է հոգեկան հրճվանք:

«Հրաշափառ» շարականի հաղթական շերտերի հետ Նորին Ս. Օծույնունը մուտք է գործում Ս. Սարգիս եկեղեցին:

Կատիճանաբար մարում են շարականների վերջին ձայները և սկսվում է սաղմոսների ընթերցումը:


Ապա, հանուն Արարատյան թեմի հայ հավատացյալ ժողովրդի, հոգևոր դասի և նորակազմ թեմական խորհրդի, Վեհափառ Հայրապետին ողջունի սրտագին խոսք է ասում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը:

«Ազգընտիր և աստվածարյալ Հայրապետ»:

Շատ տարիներ չեն անցել այն բարեբաստիկ օրից, երբ հայ ժողովրդի զավակները հավաքվեցին իրենց Կաթողիկե Մայր Տա-

րարական, վերանորոգված աշխատանքներ:

Ձեր բարենորոգչական աշխատանքների հետ միասին, Դուք վերցրեք հայոց հայրապետների հովվապետական գավազանը և մեկնեցիք արտասահման՝ ոչ արցունքոտ աչքերով ինչպես Ձեր նախորդները, այլ ուրախության ժպիտը Ձեր դեմքին: Այցելեցիք Սփյուռքի Ձեր հայրենակարոտ զավակներին: Նրանց Դուք պատմեցիք Հայրենիքի վերելքի, Ս. Էջմիածնի վերազարթոնքի մասին, տարիք Ձեր հայրենի զավակների եղբայրական ողջունները, տարիք Ս. Էջմիածնի օրհնությունները: Ձերդ Վեհափառու-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ճարում և Ձերդ Վեհափառությանը հանձնեցին հայրապետական գավազանն ու Ս. Գրիգորի հավատի սափորը և Փրկչի Իջման Ս. Սեդանի մշտավառ կանթեղի պահպանումը, որպեսզի Դուք նրանցով առաջնորդեք Ձեր հավատացյալ հոտին:

Ձերդ Վեհափառության առաջին գործը հղավ բարեկարգել վանքը՝ այն վերածելով ի Քրիստոս սիրով միաբանած եղբայրների հոգևոր ու մշակութային մի հաստատության:

Ձեր ղեկավարության տակ Մայր Աթոռում և շրջակա վանքերում ծավալվեցին շինա-

թյունն իր բոլոր որդիներին ասաց անխորհրդաբար զատ զավակներ Մեր, եկեք Մեզ մոտ, չզի ահա ձեռն էանց, անձրև անցին, ծաղիկք երևեցան յերկրի... ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում, թղևի արձակեաց զբողոքոջ իւր, որթք միւր ծաղկեալ հտուն զհոտս իւրեանցս:

Արտասահմանից վերադառնալուց հետո, Դուք այցելեցիք նաև Ձեր ներքին թեմերի հավատացյալներին—Լենինական, Նոր-Նախիջևան (Ռոստով), Բքիլիսի, Բաքու, Կիրովաբադ, Ղարաբաղ և այլ վայրեր: Հայ ժողովուրդը և նրա դրացի եղբայրական

ժողովուրդները խանդավառությամբ դիմավորեցին Ձեզ, իրենց սրտի զգացմունքները շրթներին կոչեցին. «Երկա՛ր կյանք Հայրապետին, երկա՛ր օրեր Հայոց Հոր և խաղաղության պաշտպանին»:

Այսօր Դուք այցելություն եք տալիս հայրապետական թեմին՝ Երևանին. Ձեր հոգևոր զավակների խանդավառությունն ու հրձկանքը անսահման են այսօր Ձեր շնորհաբեր այցելության ուրախ առիթով: Մեր բոլորի սրտից բխում են աղոթքներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավերժության, անսասնականության և Ձեր անձի արևշատության մաղթանքներով:

Այսօր Դուք մեզ հետ միասին պիտի աղոթեք մայրաքաղաքի այս առաջնորդանիստ եկեղեցում՝ մեր Եկեղեցու պայծառության, Հայրենիքի հզորության և մեր ժողովրդի լուսավոր առաքալի համար:

Երևան... աշխարհի հնագույն քաղաք: Հայր ալատեղ անցյալում տեսել է շատ դառն օրեր. «Երևանու բերդն, Երևանու բերդն՝ ախ՛ որ առավոտն բացվելիս՝ նրա էն լաշար գլուխը մարդի աչքով չէր ընկնում, հենց իմանաս՝ թե զժողովն ա իր բերանը բաց անում, աստամները զրծտացնում ու իր ապականչալ, թունավոր դառը շունչը շորս կողմը փրփրալով փչում, ցրվում... էլի հազար անմեղ, արդար հոգի՝ անծամ կույ տա, իր անկուշտ փորին մատաղ անի»: Ահա այսպես է եղել Երևանը անցյալում, ինչպես նկարագրում է մեր անմահ Աբովյանը:

Սակայն այսօր Երևանը դարձել է մեր ժողովրդի փառքը, սիրուն մայրաքաղաքը, հույսերի, հույզերի ծովը: Մարդարները գնացել են պատմության գիրկը, իսկ քաղաքում ապրում և իշխում է ինքը հայ ժողովուրդը: Նա այսօր իր առավոտը դիմավորում է նորանոր գեղեցիկ շենքերով, որտեղ մանուկն ու պատանին դպրոց են գնում, երիտասարդը՝ համալսարան, բանվորը՝ խաղաղ աշխատանքի: Թող օրհնվի այսօրվա մեր Երևանը, օրհնեցեք Դուք, երջանիկ Հայրապետ, Ձեր սուրբ օրհնությամբ, որպեսզի նա մնա միշտ խաղաղության մեջ:

Վեհափառ Տե՛ր, Ձեր՝ Երևան հայրապետական շնորհաբեր այցելության առթիվ, թույլ տվեք ինձ, որպես Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի, Երևանի բոլոր եկեղեցիների հոգևորական դասի, թեմական խորհրդի և ամբողջ ժողովրդի անունից սրտագին մաղթել Ձեզ բարի գալուստ. Դուք բարով եկաք Երևան, Վեհափառ Հայրապետ:

Այսօր, այս պատմական պահին, հայ հավատացյալ ժողովրդի հետ միասին բազկատարած մաղթում ենք առ ամենաբարձրյալն Աստված, որ նա ծաղկյալ պայծառացնի

Ձեր հայրապետական իշխանության գավազանը:

Աղոթում ենք, Վեհափառ Հայրապետ, Ձեր կյանքի արևշատության և ազդեցության գործունեության հաջողության համար: Մատուցում ենք ի համբույր շնորհաբաշխ Ս. Աջույդ և խնդրում Մեծ Քահանայապետից օրհնությունը մեզ բոլորիս վրա:

Տե՛րը թող անասան պահի Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը և մեր վերածնված Մայր Հայրենիքը: Ամենա՛մ:

Հանուն մայրաքաղաքի քահանայական դասի, ողջունի սրտառու խոսք է ասում նաև Ս. Սարգիս եկեղեցու խաչակիր քահանա արժանապատիվ Տ. Սարգիս Անդրեասյանը:

«Մրբազնագույն Տե՛ր.

Հանուն Արարատյան թեմի քահանայական դասի, հանուն Երևանի թեմական խորհրդի, իմ վրա դրվել է մի շատ պատվալոր ու քաղցր պարտականություն՝ մատչելու Վեհափառությանը Ս. Աջույդ և մաղթելու բարի գալուստ:

Վեհափառ Տե՛ր, Արարատյան թեմի Ձեր զավակներին տրված այս շնորհաբեր այցելությունը հաճելի առիթ կընծայի մեզ՝ Ս. Եկեղեցու ուխտյալ քահանայական դասին և թեմական խորհրդին՝ հավաստացնելու Ձեզ, որ մեր հոգու ամբողջ ջերմությամբ զորավիգ ենք Ձեր երիտասարդ ու կորույի ներկայացուցչին՝ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետին՝ Արարատյան թեմը իր նյութական ու բարոյական կողմերով հասցնելու օրինակելի բարձրության:

Սկսած Առավոտը՝ այս դարաշրջանից, հայ ժողովուրդը իր գոյության իմաստը, իր բարոյական և իմացական ուժը քաղել է Ս. Էջմիածնից: Հետևաբար, Հայ Եկեղեցին չի կարող իր գոյությունը արդյունավորապես արժեցնել առանց այս լուսի աղբյուրին, ուր Աստուծո Միածին Որդին մեր հավատի Հորը լուսավոր նալվածքի միջից մի օր ցույց տվեց հանուր հայության իրր կենտրոն:

Էջմիածին, սրբազան Մինայից իջեցված տասնաբանյա պատվիրան՝ աստվածային շնչով երաշխավոր:

Էջմիածին, Վաղարշապատի սրտին վրա բարձրացող «անկեղ մորենի», Առավոտի ձեռքով Քորեք սարից տարատնկված:

Էջմիածին, խանդակաթ ու անփոխարինելի մայր, որ իր զավակների՝ ի սփյուռ աշխարհի ցրված հայության հետ խոսեց միշտ իր հիշատակի քաղցրությամբ, իր ավանդությունների սրբությամբ, իր Սրբի արյունով և հայ ժողովրդի հավատի լուրդով բոցավառ կանթեղով:

Էջմիածին, երկնային տնօրինությամբ լուսավոր և հոյակապ անդրանիկ քաղաք մայր, եկեղեցական իշխանության և վի-

րածննդի հոգևոր արդանդ և տապանակ, որ պահպանվել են մեր հավատի կենսունակությամբ ու նահատակների հիշատակը:

Էջմիածին, ոչ առասպել և ոչ էլ դիցավեպ է քաղցրահունչ այդ բառի բովանդակած պատկերը, այլ, գերազանցապես ներշնչող մի Սրբի հրաշակերտը, որ պատմությունն ու էությունն իսկ է հայություն:

Սրտի բովանդակ ջերմությամբ մաղթենք, որ հայության հոգևոր և մտավոր կրակի առանցքն հանդիսացող այս հոգևոր կոթողը հավերժանա իր երջանիկ Գահակալով՝ իր հովանու տակ մակաղելու համար հայության ամենահեռավոր բեկորներն իսկ:

Ռության հետ: Նորին Վեհափառությունը հավատացյալներին հորդորում է կենդանի պահել հալ հավատը և ավելի մոտիկ կանգնել եկեղեցական կյանքին: Վերջում հաջողություն և երջանկություն ցանկանալով՝ բոլորին օրհնում է:

Սկսվում է Ճաշու ժամը և մատուցվում է հայրապետական սուրբ պատարագ: Պատարագին ներկա են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Սարգիս Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները:



ՀԱՎԱՏԱՅՑԱԼՆԵՐԸ ՀԱՂՈՐԴՎՈՒՄ ԵՆ

Այնուհետև Վեհափառ Հայրապետը դառնալով դեպի հավատացյալները, հանդիսավոր լուծության մեջ հաղորդում է նրանց իր հայրապետական ողջույններն ու օրհնությունները, հայտնում է իր գոհունակությունը սրտառու և խանդավառ ընդունելության և մանավանդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետի և արժանապատիվ Տ. Սարգիս քահանայի ջերմագին խոսքերի համար: Ապա անդրադառնում է թեմի պատմական մոտիկ անցյալին և այն ծրագրերին, որոնք սերտորեն կապված են Արարատյան թեմի հոգևոր կյանքի շինության և եկեղեցիների պայծա-

Պատարագի երգեցողությունը կատարում է Մայր Տաճարի և Ս. Սարգիս Եկեղեցու միացյալ երգեցիկ խումբը:

Պատարագը մատուցվում է պատշաճ հանդիսավորությամբ և խորունկ երկյուղածությամբ: Սուրբ պատարագին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Նղիշե և Տ. Մեսրոպ վարդապետները, արժանապատիվ Տ. Կոմիտաս և Տ. Սարգիս քահանա հայրերը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

«Յանուն Հոր և Որդույ և Հոգույն Սրբոյ, ամէն»:

«Ձի բեպտ և հմբ ածու փոքր, և բուով յոյժ բնդ փոխու սահմանեալ..., սակայն բազում գործք արուքեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գոցց յիշատակի»:

ԽՈՐԵՆԱՅԻ

Տիրոջ ողորմութեամբ, այսօր, կիրակի, 8 դեկտեմբեր 1957, Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցի կուգա Արարատյան հայրապետական թեմին, մեր վերածննդ Հայրենիքի մայր Բաղամ Երևանին:

Ս. Էջմիածնէն կուգանք, Մեր սիրտը լեցուցած հավատքի լույսով, բաշխելու համար զայն ձեր սրտերուն, ձեր հոգիներուն: Լո՛ւյս առնէ, արիացնէ և ողջույն տվիք միմյանց:

Ողջո՛ւյն և բյո՛ւր օրհնություն Փրկչի Իշման ամենասուրբ սեղանէն՝ ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, ձե՛զ, մայրաքաղաքացիներ և Բե՛զ, մեր հույս և ապավեն, գարուն երևան:

Շատոնց ի վեր Ամենայն Հայոց Կաթողիկոսը ձեզ այցի չէր եկեր: Փոփոխական անցքեր գանազան, ձմռան նման, եկան ու անցան...

Այսօր սակայն, տեսնե՛ք, ինչքա՛ն պայծառ է մեր կյանքի երկինքը և ինչքա՛ն լուսավոր են բոլոր հորիզոնները:

«Անցան վշտի դարերն հայոց,

եկան կամփի դարերն հայոց»:

Փա՛ռք Աստուծո՛ւ ամենակալին:

Արդ, սիրտ առնենք, Բաղամբովին ու հառաջ բերանանք, զի հույժ բարի են ծամանակները, և ձեռնենք բազում են»:

Ականջ տվե՛ք, հարազատներ՝ Մեր, աշխատանքի, ուրախության և երգի ձայներ կհնչեն այսօր հայոց լեռներէն և կենդանության զուլալ ջուրեր հորդաստ կհոսին մեր ձորերէն, մեր դաշտերէն, և լույս է ամեն տեղ:

Ու Հայ Հայրենիքի վերածննդյան այս օրերուն, Լուսավորչի անմար կանթեղն ալ, Արագածի կատարէն, սև ամպերէն ազատած, նոր շողակաքումով, իր ջնորհները կսփռէ Հայոց աշխարհին և հայաստանցիներուն, նոր կյանք առած՝ լուստ խորան սրբազնասուրբ Էջմիածնի օրհնությամբ:

Սիրելի՛ երևանցի հավատացյալներ, Մեզ հայտնի է, թե զո՞ւմ շատոնց կսպասեիք նորընտիր Կաթողիկոսի հովվապետական այցելության: Երկու տարիներ անցան Մեր ընտրութենէն սաղին, և Մենք այսօր միայն կուգանք ձեզ մոտ: Գուցէ ներքին իմաստ մը կա այն իրողության մեջ, որ Մեր գործունեությունը այսպես դասավորվեցավ: Մենք նախ այցելեցինք Մեր արտասահմանի

հուրը, ապա մեր ներքին թեմերը, դրացի եղբայրական երկրներու մեր եկեղեցիները, և հուսկ ուրեմն՝ աշխարհագրականորեն Մեզ ամենամոտիկ, Մեր հարազատ հայրապետական թեմը՝ Արարատյան թեմը՝ Երևանը, այս առաջնորդանիստ պատմական Ս. Սարգիս եկեղեցին:

Այսօր, Մենք կուգանք սակայն ձեզ ավետիս տալու, ձեզ բերելու բարի լուրեր թե՛ արտասահմանէն, թե՛ դրացի եղբայրական հանրապետություններէն, ուր հայ ժողովրդի հոծ բազմություններ կապրին:

Այսօր, մոտ չորս միլիոն մեր ժողովուրդը կրնանք գրեթե երեք հավասար մասերու բաժնել, ըստ աշխարհագրական բնակության վայրի: Ավելի քան մեկ երրորդը ամփոփված է այստեղ՝ մեր Մայր Հայրենիքի սահմաններէն ներս, մեկ երրորդը կրնակի դրացի եղբայրական հանրապետություններու մեջ մինչև հեռավոր Անդրկասպյան երկրներ, իսկ մնացած մոտ մեկ երրորդը ցրված է ի սփյուռս աշխարհի դեպի հարավ, դեպի արևելք և դեպի արևմուտք, մինչև հեռավոր ասիերը Ատլանտյանի, Խաղաղականի և Օվկիանիայի:

Աշխարհի վրա գրեթե չկա երկիր, ուր հայ ժողովրդի պանդուխտ զավակները իրենց կյանքի լատար հաստատած չըլլան:

Արդ, ավետիս կուտանք ձեզ, սիրելի՛ երևանցիներ, որ ի սփյուռս աշխարհի ապրուր բոլոր հայերը, ուր որ ալ գտնվին, երբեմն անհարազատ պայմաններու մեջ, երբեմն նույնիսկ հալածական, անոնք բոլորը ձեր հարազատ եղբայրներն ու քույրերը կմնան, անոնց բոլորի երակներէն նույն շերտ արյունը կհոսի, անոնք ձեզ պես չարքաջ են ու տաղանդավոր, անոնք ձեզ պես շինարար են ու ստեղծագործ, անոնք ձեզ նման կլսասին, ձեզ նման կերգեն, ձեզ նման կաղոթեն: Անոնք նույն լույս հավատք ունին, նույն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կդավանին և նույն Մայր Հողը՝ մեր Հայաստանը կպաշտեն: Ունին իրենց եկեղեցիները, իրենց հայկական դպրոցները, մշակութային, մարզական, երիտասարդական կազմակերպությունները, իրենց մամուլը և բարեգործական հաստատությունները և հայրենասիրական կազմակերպությունները: Այդ բոլորի նպատակն է ապրիլ ու մնալ հա՛յ, ապրիլ



իբրև հավատացյալ ու հայրենասեր հայ, հավատարիմ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն և Հայ Հայրենիքին:

Գուցե ավելի քան երբեք «Ի ՎԵՐԱՅ ԱՂՈՅՆ ԵՒ ԷԶՄԻԱՍՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳԻ ՀԱՅՈՑ ԿԱՊԵԱԼ ԿԱՆ»:

Այս է, սիրելի՛ք Մեր, ճշմարիտ հոգեկան պատկերը հայ ժողովրդի լայն զանգվածներուն, Սփյուռքի պայմաններուն մեջ: Կան անշուշտ անոնց մեջ ուծացածներ: Կան նաև ուղեկորույսներ, կան խաբխափողներ: Փոքրաթիվ են սակայն անոնք և զուրկ է անոնց գոյությունը և անոնց գործը՝ իրավ արժեքն, իրավ իմաստն՝ հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցիի ճշմարիտ կյանքի շինության հանապարհի վրա: «ՄՈՂՈՐԵՑԱՆ ՆՈՔԱ ՅԱՆԱՊԱՏԻ ԵՒ ՅԱՆՋՐԴԻ ԶԱՆԱՊԱՐԶԻ... ՔԱՂՅԵԱՆ ԵՒ ԵԱՐԱՒԵՑԱՆ, ԵՒ ԱՆՁԻՐՔ ՆՈՅՍ Ի ՆՈՍԻՆ ՆՈՒԱՂԵՑԱՆ» (Սաղմ. ԶԳ 4—5): Բայց Մենք միշտ պիտի աղոթենք անձանձուրյա, որ անոնք վերադառնան անապատեն և առաջնորդվին հայ հոգիին լույսով՝ «Ի ԶԱՆԱՊԱՐԶ ՈՒՂԻՂ, ԶԻ ԵՐԹԻՅՆՆ Ի ՔԱՂԱՔ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԻՐԵՆԱՆՑ»:

Հայ հոգիին լույսը, մեր կյանքի աստղը՝ Ս. Էջմիածնի լույսն է, որ կշողա բոլոր երկինքներու վրա և կհաղթահարե ամեն հեռավորություն, ամեն սահման, ամեն արգելի: Երանի անոնց, որ գիտեն տեսնել փրկության լույսը այդ:

«Ով անմեղ է, լիք սիրով
Ու հավատով անասան,
Ով նայում է վառ հույսերով
Դեպի հայոց ապագան,—
Նա կը տեսնի էն մշտավառ
Զահր կախված երկնից,
Ասես Ասածո աչքը պայծառ
Հսկում է ցած երկնից»:

(ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ)

Ամբողջ մեր ժողովուրդը, համայն հայությունը այսօր այս զգացումին մեջ կապրի, մանավանդ այստեղ, երբ բազմադարյան Ս. Էջմիածինը նոր կյանք առած կվերաշինվի, սուրբ եռանդով բոցավառ:

Անավասիկ ավետիսը, որ կրեւենք ձեզ այսօր Մայր Աթոռեն, անավասիկ ձեզ բարի լուրեր ձեր հեռավոր պանդուխտ եղբայրներեն և քույրերեն:

Ձեր աչքերուն մեջ Մենք կտեսնենք ու կզգանք անսահման ուրախություն մը ի լուր այս բյուրին: Բայց այս պահուս ձեր հոգիներուն մեջ Մենք կկարանք ուրիշ ցանկություն մը ևս, բուռն ցանկություն մը, հպարտության զգացումով զեղուն. այն է՝ ավետիսին ավետիսով պատասխանել:

Դո՛ւն, հայաստանցի հայ՝ ժողովուրդ, իբրև կերտողը մեր վերածնած նոր Հայրենիքի, դո՛ւն, իբրև կերտողը մեր զուսպեղ պերս Երևանի, իբրև կերտողը հսկա հվաճումներու՝ ժողովրդական տնտեսության, արդյունաբերության, շինարարության, գիտության և մշակութային ու զեղարվեստական կյանքի մեջ, արդար պարծանքով և հպարտությամբ կկամենաս մեծ ավետիսը տալ համայն հայության, մանավանդ ի սփյուռս աշխարհի ցրված բոլոր եղբայրներուդ, բնիկու համար անոնց, որ դուռն բոլորս արևելքի պապերուդ հողին և անոնց ուխտին վրա ամուր կանգնած, հուժկու բազուկներով և հանճարիդ լույսով կկերտես ամենայն հայոց Մայր Հայրենիքը և անոր պայծառ ապագան, որ օր մը պիտի մեկտեղվին, պիտի միանան բոլոր հայերը բոլոր երկրներեն: «ԶԻ՛ ԲԱՐԻ Է, ԶԻ՛ ՎԱՅՆՈՒԹ. ԶԻ՛ ԲՆԱԿՆ ԵՂԱՐՔ Ի ՄԻԱՍԻՆ... ԱՆԴՊԱՏՐԱՍՏԵԱՑ ՏԷՐ ԶՕՐԶՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԿԵԱՆՍՆ ՅԱԻԻՏՆԵԻՑ (Սաղմ. ԶԳ 1—3):

Իբրև կաթողիկոս Ամենայն Հայոց և իբրև հայ ժողովրդի զավակ, Մեր սիրտը ինչպե՛ս չհրմվի և Մեր հոգին ինչպե՛ս չլեցվի մխիթանությամբ քաղցր հույզերով:

Ոչ երազ է այլևս, և ոչ ալ պատրանք: Իրավ է, սիրելի՛ք, Մայր Հայաստանը վերածնած է այսօր, Մայր Հայաստանը վերաշինված է այսօր, Մայր Հայաստանը խաղաղ է այսօր, Մայր Հայաստանը կապրի կենսալի, կապրի շինելով, կշինե երգելով՝ ողորմությամբ Աստուծո հարցն մերոց և աղոթքներովը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո: Հայ ժողովուրդը արցունքով սերմանեց և այսօր ցնծությամբ և փառքով կհնձն:

Ողջո՛ւյն քեզ և բյուր օրհնություն, երկիր մեր նաիրյան, վերածնած մեր Մայր Հայաստան:

Ողջո՛ւյն և օրհնություն մեր Հայրենի հարազատ Կառավարության, ողջո՛ւյն բոլոր անոնց, որոնք կպարբենեն մեր ժողովրդի ոսկի ապագան:

Ողջո՛ւյն և օրհնություն քեզ, շինարար և շարժաշ և քաղաքի ժողովուրդ հայոց:

Ողջո՛ւյն և օրհնություն ձեզ, հայ շինականներ ու հարտար բանվորներ, ողջո՛ւյն ձեր բարի, ձեր շինող ձեռքերուն:

Ողջո՛ւյն և օրհնություն հայ գիտության և հարտարարվեստին, ողջո՛ւյն հայ որևող և ստեղծագործ մտքին:

Ողջո՛ւյն և օրհնություն հայ դպրության, գրականության և արվեստներուն, ողջո՛ւյն վերածնած Հայկական հանճարին:

Տեր Աստված մեր, արարիչ և պահպան ամենայնի, Դուռն պահե պահպանե անփորձ

և անխռով Մայր երկիրը մեր, ժողովուրդը մեր, լույս հավատքը մեր, Ս. Էջմիածինը մեր, Հայրենի Կառավարությունը մեր, բաղաճներն ու գյուղերը մեր, հառաքներացն ու վերելքը մեր, սերն ու միությունը մեր, խաղաղությունը մեր, այժմ և հավիտյան, ամեն:

«Շնորհիք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսին, ամէն»:

Այնուհետև շարունակվում է հայրապետական սուրբ պատարագը: Բազմաթիվ հավատացյալներ հաղորդություն են ընդունում Վեհափառ Հայրապետի Ս. Աջից:

Հավարտ սուրբ պատարագի տեղի է ունենում Նորին Ս. Օծուխյան սրտառուչ հրաժեշտը: Ահագին բազմություն է խոնվում Վեհափառ Հայրապետի և Նրա շքախմբի շուրջը: Հնչում են ծափողջուլները և ինքնաշարժները ուղղություն են վերցնում դեպի Երևանի Ս. Զորավոր եկեղեցին և ապա Ս. Հովհաննես եկեղեցին: Այստեղ Նորին Վեհափառությունը ընդունվում է ջերմագին խանդավառությամբ, ծափողջուլներով և ուղերձներով: Նորին Ս. Օծուխյանն իր աղոթքը մատուցելուց հետո, հավատացյալ ժողովրդին հաղորդում է իր հայրապետական ողջույններն ու օրհնությունները և իր գոհունակությունն է հայտնում ցուցաբերված սիրալիր ընդունելության համար:

Նորին Ս. Օծուխյան Վեհափառ Հայրապետը, մայրաքաղաքին տված հովվապետական այցելության առթիվ, նույն օրը ժամը 4-ին իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Երևանի քաղաքային Սովետի ղեկավարությանը, մասնակցություն մեծ գերապատիվ Ս. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի, Ս. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Ս. Վահան վարդապետ Գալամդարյանի, հոգեշնորհ Ս. Նղիշե և Ս. Մեսրոպ

վարդապետների և Մայր Աթոռի դիվանապետ պր. Հայկ Առաքելյանի:

Երևանի քաղաքային Սովետի նորակառույց գեղեցիկ շենքի մեծ դահլիճում Վեհափառ Հայրապետին բարի գալուստի ջերմ ողջույններով ընդունեցին քաղաքային Սովետի նախագահի տեղակալներ պր. պր. Ս. Վարդանյանը, Խ. Վիրաբյանը, Գ. Ներսիսյանը, Գ. Հասարկյանը, քաղաքային Սովետի պատասխանատու քարտուղար Ն. Անմեղիկյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Գ. Աղաբաբյանը:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպված հյուրասիրության շուրջը ծավալվում է մտերիմ զրույց Նորին Ս. Օծուխյան հովվապետական այցելության և ցույց տրված խանդավառ ընդունելության մասին, և այն բոլորի մասին, ինչ վերաբերում է մեր Հայրենիքի, և ի մասնավորի Երևանի շինարարական և մշակութային հզոր աճին:

Բաժակ է առաջարկվում Վեհափառ Հայրապետի թանկագին կենացը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Երևանի քաղաքային Սովետի ներկայացուցիչներին, հանձին նրանց բաժակ է բարձրացնում Հայրենի հարազատ կառավարության կենացը և լավագույն բարեմաղթություններ է անում՝ ցանկանալով նրանց բազմարդյուն ու շինարար կյանք՝ ի պաշտոնություն հայոց Հայրենիքի և հերջանկություն հայ ժողովրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Ընդունելությունն անցնում է մտերիմ ու սրտագին մթնոլորտի մեջ:

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը վերադառնում է Մայր Աթոռ:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՔԻՍ

